




ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԳԻՈՐԳ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-
սանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթու-
ղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագ-
գական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական
Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի.

*Մեծարոյ բժշկապետի Բագարատայ Նաւասարդեան,
հիմնադրի Հայկական Բարեգործական Ընկերութեան, որ ի
կոմկաս, որպէս եւ այլոց ամենեցունց նախագահից եւ ան-
դամոց մէն մի ընկերութեանց ազգային, որ ի Տփլիս, ողջոյն
եւ օրհնութիւն Հայրապետական:*

*Ի սաստկութենէ վշտաց, եկելոց հասելոց ի գլուխ
հարազատ որդւոցս՝ ընդկորեալ, վշտագնեալ ի սիրտ՝
գտուայտանաց հարազատիցս հանապազ խորհուրդ ի միտ
ունելով, զնոցայն հոգայի հնար ապրեցուցանելոյ, ըստ
հնարից, գտանել և աղաչէի հանապազ զՏէր, եթէ ցուցա-
նելով ցուցցէ արդեօք ծառայի իւրում հնար խելամտու-
թեան, հանել զնոսա ի նաւահանգիստ բարի և անդորր,*

ի ծովէ տառապանացս, նեղութեանց և հալածանաց, որք եկին հասին ի վերայ նոցա և Մեր, որ Գլուխ կոչեցաք և Հայր հանուրց ի ծանր և վատաբաղդ ժամանակիս:

Խորհէի և աւտղէի, եթէ ահա կամ և ունիմ մնալ հա-
նապաղ կքեալ ընդ ծանու բեռինս իմոյս, զի ո՞րք տայր
այսուհետեւ սրբել յաչացս զարտասուս ցաւատանջ որդւոցս
վշտի և բեկման, քանզի իսպառ վերացաւ ուրախութիւն
ի մէնջ, ոչ ամենեկին երևեցաւ նշոյլ խրախութեան ի սիրտ
մեր և յաւէտ յայտ և եթ կեալ ունէաք ակն, զի սիրտ հօր
վշտահարի, ունիցի՞ ժոյժ արդեօք բերկրիլ, մինչ որդւոց
նորա և դատերաց խառնի արիւն ընդ աղբերացն ջուր հայ-
րենի և զանկախ ուղիս առասպաբաց զարդարեն անթոշակ
մահուամբ անկեալ դիակունք նոցա:

Այլ անհաս են և անիմանալի խորհուրդ Նախախնա-
մութեան զթասատի առ իս, զի որդեակք իմ, որ աստ, ի
սահմանս Ռուսիոյ, շուրջ զՄեօք եկեալ, աստ ի Տփլիսս,
յաւուր Ե. տարեդարձի Օծման Մերոյ ի գլուխ և յանսայ-
թաք ղեկավարութիւն Եկեղեցւոյս Հայաստանեայց, զՁեզ
ունելով ի գլուխ իւրեանց, զսիրելիդ մեր և զհիմնադիրդ
Բարեգործական Ընկերութեան Հայոց, որ ի Կովկաս, գոգցես
առ վայրկեան մի ետուն ի մոռացոնս զհեծութիւն սրտիս
և զտառապանս հոգւոյս, զքոյդ և զամենեցունցդ սէր առ
Հայր հանուրց ձօնելով, արձանացուցեալ այն ի գիր ու-
ղերձի սրտիցդ, մտացդ և զգացմանցդ:

Ձհնգեմենին բերեալ զմտաւ հոլովելոյ ժամանակի Քա-
հանայապետութեանս վաստակոց և տքնութեանցս զշրջան,
հազիւ արդեւք ի յուշ գայ բերկրապատար ուրախութեան
այդ օրինակ ժամանց, զի անցելոյն յուշ մի միայն ի նե-
ղութիւն վշտակրութեան և յաւուրդ՝ ի սփոփումն վշտա-
ցեալ հոգւոյս, ի տես որդւոցս իմոց շուրջ եկելոց զինև,
եթէ միաբանական անդամոց Ս. Աթոռոյս և համայն ուխտի
եկեղեցականաց, եթէ ամենայն սեռից և հասակաց, յիւրա-
քանչիւր հաստատութեանց և յընկերակցութեանց, բարե-
գործականաց և այլ կարեւոր քաղաքակրթական գործոնից,
որոց ամենեցուն սէր և ջերմութիւն զգացման ի շրթանցդ

լուաք ի քոյոց և յաչս ամենեցուն, որ շուրջ զքե՛ս սիրեցելոց մերոց, որպէս ի հայելոյ տեսանէաք զարտացոլումն անկեղծաւոր հաւատով և հոգւով:

Արդ՝ ի գլուխ քո բազմաշխատ և ալեօք զարդարեալ, որ հանապաղ զհասարակացն հոգածութեանց խոկայր կարօտութեան լցուցանելոյն զդարման, զօրհնութիւն Տեառն հայցեմք ի բոլոր սրտէ, որպէս և ընկերակցացդ, որ յաւուր տարեգարծի շուրջ զՀայրապետականին բոլորեալ Գահոյիցս, ըղձանուէր մաղթանօք մատուցանէիք զամենեցունցդ յարգանս, յանձն առնեմք նահապետիդ ի գործ բարեգործութեան, զՄերս Հայրական և Հայրապետական լիառատ օրհնութեան առնել զնոսա զամենեւեանսն հաղորդս:

Մաղթեմք ի Տեառնէ լինել զօրավիգ ամենեցունցդ, որք ձեռն ի մած հասարակաց բարօրութեան արօրի եղեալ, ալօսէք զմիտս և սիրտ որդեկացս իմոց, սերմն բարի սերմանելով, է որ ի ձեռն հասարակաց ղեկավարի ստանձնեալ զպաշտօն, ի ձեռն բանի զպրութեան և մամլոյ, է որ սփռփանաց հասարականի ընկալեալ մատակարարութիւն, զանոքիցն սրբելով զարտասուս և բուժելով կարօտելոյն և տնանկին զնեղսակրութիւն, և կամ սերմն ատօք հաւատացեալ մատաղերամից մերոց սենրդոց՝ զդպրոցականին հոգածութեանց երթեալ գհեալ, է որ ի ձայն մեղանոյշ երաժշտութեան սփռփելով զցաւատանջ հոգւոյն վէրս, է որ իբրև մեղու փոյթեռանդն Հայրենեացն մերոց խուզեալ յիշատակաց արդիւնս, ի ժողովումն, ի պահպանութիւն, ի խնամս, ի դաստիարակութիւն ներկայի և ի կրթութիւն ապագայի մերս սերնդեան:

Աղէ, զիք ամենեքեան յոյս ի Յուսատուն և Յուսազրիչն ամենեցուն, յառէք զաչս Ձեր ի նալատակ հասարակացն օգտի, սիրով կրելով իւրաքանչիւր ոք ի ձէնջ զխաչն, որ իւրն անկաւ բաժին, զի Յաչեցելոյն օգնակահնութեամբ, մի ալ ևս ելցէ ի խաչ ժողովուրդ իմ տառապեալ, բեռեցէք զբիբ աչացդ մտաւորականի յԱրեն լուսաշող, զի ծագեսցի արև Մարդասիրին ի վերայ աստան-

դական որդւոցս իմոց, տարագրելոց ի սփիւռս երկրի,
խոշտանգեալ ի Միջագետս, արեակէզ ի Սիւրիա:

Աղաչեմ զԱստուած, օրհնել զՔեզ և զամենեանսդ
ի գործ բարի, շնորհելով մէն միում ի ձէնջ սիրտ սուրբ և
հոգի բարի, եռանդ և ջան՝ ի շինութիւն և ի բարիոք
կանգնումն հասարակաց արդիւնաւոր կենցաղոյն, յոր
կոչեցաք մշակք պիտանաւորք:

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր, օրհնեալ ի Մէնջ յա-
ւէտ. Ամէն:

Պ Ե Ռ Ր Պ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի 25 յուլիսի 1916 ամի

Հստ տոմարիս ՌՅԿԵ

ի Հայրապետութեան Մերում Ե. ամի

ի Տփլիս.

թ. 1586

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Կոնդակ օրհնութեան Նոր-Բայազիտի գաւառի Փա-
շաքեանդ գիւղի դպրոցական շինութեան Յանձնաժողովի
անդամների՝ Դեղամ քահանայ Տէր Սիմէօնեանի, Սարգիս
Դաշտոյեանի, Յակովբ Զանէեանի, Պօղոս Սարգսեանի,
Կարապետ Աւետսեանի, Խաչատուր Պօղոսեանի, Մադաթ
Դաշտոյեանի և Սիրական Յարութիւնեանի անունով՝
1915 թ. ընթացքում միահամուռ ջանքերով դպրոցական
շէնքը սկսելու և վերջացնելու առթիւ: 2 մայիսի, թ. 990:

Դիւանի գրութիւն Տ. Սահակ Արքեպիսկոպոս Այվա-
տեանի անունով, որով, համաձայն Նորին Վեհափառութեան
հրամանի, յանձնարարուեց քահանայ ձեռնադրել Ղարա-